ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐ

Հայկանուշ Պավելի Չոբանյան
ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն
Վերադարձի և վերաինտեգրման բաժնի պետ, ԵՊՀ հայցորդ

Դեպի Հայաստան վերադարձի հոսքերը:

Հայաստանի Հանրապետության միգրացիոն հոսքերում վերադարձի առավել ինտենսիվ հոսքեր սկսել են ձևավորվել 2002-2007թթ.: Տարիներ շարունակ Հայաստանում սահմանահատումների սալդոն բացասական է եղել և միայն 2004-2006թթ., այնուհետև՝ 2018թ. է արձանագրվել սահմանահատումների դրական սալդո[1] (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Սահմանահատումների դինամիկան ըստ տարիների

Այսօր, ավելի քան երբևէ, առկա է դեպի Հայաստան վերադարձի կայուն հոսք, և Հայաստանից արտագաղթած ՀՀ քաղաքացիների վերադարձի հիմնախնդիրները մնում են խիստ արդիական Հայաստանի հասարակության և պետության համար:

Վերադարձի հոսքերի ինտենսիվությունը առավել ակտիվացավ հատկապես վերջին տարիներին Եվրամիության երկրներում խստացված միգրացիոն քաղաքականությամբ՝ պայմանավորված նաև 2015թ. Եվրոպայի միգրացիոն ճգնաժամով: Այսօր Եվրոպական Միությունից միգրանտների վերադարձը իրենց ծագման երկրներ ԵՄ միգրացիոն քաղաքականության օրակարգի առաջնահերթություններից է, և Եվրոպայում վերջին տարիների

[1] Սահմանահատումների դինամիկան 2000-2018թթ.: Հասանելի է՝ http://smsmta.am/?menu_id=18 .

միգրացիոն զարգացումները ցույց են տալիս, որ վերադարձի վրա կենտրոնացումը հետագա տարիներին ոչ թե նվազելու, այլ հակառակը՝ ավելանալու է: Միևնույն ժամանակ, ԵՄ անդամ մի շարք պետությունների կողմից Հայաստանն այլևս դասվում է «ապահով երկրների» շարքին, ուստի Հայաստանի միգրանտներից ստացվող ապաստանի հայցի դիմումների գերակշռող մասը մերժվում է[1]:

Այսպես, 2010-2018թթ. ՀՀ քաղաքացիների կողմից ԵՄ և ԵԱԱԸ անդամ պետություններում ներկայացվել է 57250 ապաստանի հայց[2]: Ընդհանուր առմամբ, 2010-2018թթ. վերջնական որոշումների հիման վրա ՀՀ քաղաքացիներին շնորհվել է 1080 փախստականի կարգավիճակ, 1015 հումանիտար պաշտպանության կարգավիճակ և 880 օժանդակ պաշտպանության կարգավիճակ: Այս ժամանակահատվածի 4 հիմնական նպատակակետ երկրներն են Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրիան և Բելգիան, որոնք միասին տարեկան ընդունել են ՀՀ քաղաքացի ապաստան հայցողների մոտ 88%-ին:

Վերոնշյալ վիճակագրությունը փաստում է, որ վերջին տարիներին ԵՄ անդամ երկրներում անկանոն կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների թվաքանակը զգալիորեն ավելացել է և անկանոն կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների կուտակումներ են առաջացել, նրանց վերաբերյալ նաև ԵՄ տարածքը լքելու պաշտոնական որոշում է կայացվել, ինչն էլ հանգեցնելու է առաջիկայում նրանց վերադարձի արագացմանը: Նրանց վերադարձը ձգձգվում է տարբեր հանգամանքների բերումով[3], սակայն ի վերջո հայտնվելով անկանոն կարգավիճակում (օր. մերժված ապաստան հայցողներ, առանց փաստաթղթերի միգրանտներ և այլն)՝ կամավոր կամ հարկադիր վերադառնում են Հայաստան:

Վերադարձի գործընթացը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության անդամ երկրների միջև կանոնակարգվում է «ԵՄ և ՀՀ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրով, իսկ Հայաստանի

---

[1] EMN Inform-Safe Countries of Origin, էջ 8, https://ec.europa.eu/home-affairs/sites/homeaffairs/files/00_inform_safe_country_of_origin_final_en_1.pdf, Հայաստանում չկան պատերազմական գործողություններ, մարդու իրավունքների համատարած ոտնահարում և այլն:

[2] **Մաթևոսյան Վ.** «Միգրացիան թվերով. վերլուծական տեղեկագիր: Եվրոպայում միջազգային պաշտպանություն որոնող ՀՀ քաղաքացիները»: Միգրացիոն ծառայություն, 2019թ.: Հասանելի է՝ http://www.miglib.org/sites/default/files/migration_in_figures_0.pdf .

[3] Հնարավոր չի լինում իրականացնել ճամփորդական փաստաթղթերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի բացակայության կամ կեղծ տվյալների առկայության դեպքերում: Շատերը, ամեն կերպ փորձելով հաստատվել եվրոպական որևէ երկրում, կրկնակի ապաստանի հայցեր են ներկայացնում, որի հետևանքով երկարատև գործընթաց է սկսվում, որը երբեմն տարիներ է տևում և այլն:

Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրով: Ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում կողմերը պարզում են այն անձանց ինքնությունը, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում հարցում ներկայացրած պետության տարածք մուտք գործելու, ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին, և պարտավորվում են հետ ընդունել իրենց սեփական քաղաքացիներին:

Առկա վիճակագրական տվյալները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել Հայաստան վերադարձի հոսքերի, ինչպես նաև առաջիկա տարիներին կանխատեսվող վերադարձի հոսքերի մասին (տե՛ս գծապատկեր 2):

- **Հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի շրջանակներում ստացվող հայցերի** (առանց թույլտվության բնակվող անձանց) քանակը տարեցտարի ավելանում է[1]: Այսպես, եթե 2015թ. ԵՄ երկրներից ստացվել է 146 հայց, ապա արդեն 2018թ. ստացվել է 1042 ռեադմիսիոն հայց՝ 2077 անձանց վերաբերյալ: Ռեադմիսիոն հայցեր ուղարկող ԵՄ երկրների թիվը 2014թ. 2-ի փոխարեն (Շվեդիա և Լեհաստան) 2018թ. դարձել է 8-ը: Պատասխանների միջինում 80%-ի պարագայում ՀՀ քաղաքացիություն ունենալու փաստը հաստատվում է: Ընդհանուր առմամբ, 2012-2018թթ. ընթացքում ԵՄ երկրներից և Ռուսաստանի Դաշնությունից ստացվել են 2488 ռեադմիսիոն հայցեր՝ 4889 անձանց մասին, որոնցից 3937 անձանց քաղաքացիությունը հաստատվել է: Վերջին երկու տարիներին ռեադմիսիոն հայցեր ուղարկող առաջատար երկիրը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն է, որը 2017թ. ուղարկել է 499 հայց (1022 անձանց մասին), իսկ 2018թ.՝ 681 հայց (1385 անձանց մասին): 2019թ. առաջին ութ ամիսների ընթացքում ԵՄ 8 երկրներից և ՌԴ-ից ստացվել է 679 հայց՝ 1376 անձանց մասին, որից 1063 անձանց ՀՀ քաղաքացիությունը հաստատվել է:

[1] Ռեադմիսիոն հայցերի վիճակագրությունը հասանելի է Միգրացիոն ծառայության պաշտոնական կայքում, հասանելի է՝ http://smsmta.am/?menu_id=267 .



Գծապատկեր 2. Ստացված ռեադմիսիոն հայցերի ընդհանուր թիվը ըստ տարիների

- Ըստ **Եվրոստատի** տվյալների, 2017թ. ընթացքում 5350 ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ վերադարձնելու վերաբերյալ որոշում է կայացվել, սակայն նրանցից փաստացի վերադարձել է ընդամենը 1470 անձ (24,7%): 2018թ. ընթացքում 4135 ՀՀ քաղաքացիներ պետք է վերադառնային իրենց ծագման երկիր, որոնցից փաստացի վերադարձել է ընդամենը 2030 անձ: Ընդհանուր առմամբ, 2009-2018թթ. ընթացքում ԵՄ անդամ պետություններում ընդունվել է 46945 ՀՀ քաղաքացիների վերադարձնելու մասին որոշում: Միևնույն ժամանակ, 2009-2018թթ. ընթացքում ԵՄ անդամ պետություններից փաստացի Հայաստան են վերադարձվել 12050 ՀՀ քաղաքացներ[1]:
- **Վերաինտեգրման ծրագրեր** իրականացնող կազմակերպությունների և ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայությունում (այսուհետ՝ ծառայություն) գործող **Վերաինտեգրման «մեկ պատուհան»** ծառայության տվյալները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել փաստացի վերադարձի մասին: Ըստ այդմ 2018թ. ընթացքում Հայաստան է վերադարձել և վերաինտեգրման ծրագրերին դիմել 1771 ՀՀ քաղաքացի. նրանցից կամավոր վերադարձել է 1493, իսկ հարկադիր՝ 278 անձ[2]: Ծրագրերի շահառուների 48%-ը կանայք են, 52%-ը՝ տղամարդիկ, 76%-ը՝

[1] **Մաթևոսյան Վ.** «Միգրացիան թվերով. վերլուծական տեղեկագիր: Եվրոպայում անօրինական բնակվող և վերադարձված ՀՀ քաղաքացիները»: Միգրացիոն ծառայություն, 2019թ: Հասանելի է՝ http://www.miglib.org/sites/default/files/migration_in_figures_2019_1_B.pdf?fbclid=IwAR2ezCd1tLR381Zu7VGfFnPW_HPNIAcixftww_f1y2owHaRSSnemxjJ-obc .

[2] Ծրագրերի շահառուների գերակշռող մասը կամավոր վերադարձողներ են, քանի որ ոլորտում իրականացվող ծրագրերի մեծ մասը նախատեսված է բացառապես կամավոր վերադարձող անձանց համար:

չափահաս, իսկ 24%-ը անչափահասներ են: 2019թ. առաջին կիսամյակի ընթացքում Հայաստան են վերադարձել և վերաինտեգրման ծրագրերին դիմել 1231 ՀՀ քաղաքացիներ, որոնցից կամավոր 944, իսկ հարկադիր՝ 287 հոգի: Վերադարձողների 56% մարզերից են, իսկ 44%-ը՝ Երևան քաղաքից:

- ԵՄ Սահմանային և առափնյա պահպանության եվրոպական գործակալության (Frontex) կազմակերպած հատուկ չվերթներով 2015-2018թթ. ընթացքում հարկադիր Հայաստան են վերադարձվել 598 ՀՀ քաղաքացիներ[1]:

Վերադարձի տարատեսակներից է հարկադիր վերադարձը, որն իրականացվում է կամ ինքնուրույն (միգրանտին ժամանակ է տրվում, որի ընթացքում նա պետք է լքի ընդունող երկիրը), կամ էլ հարկադիր արտաքսման ձևով (միգրանտը ֆիզիկապես հեռացվում է երկրից): Ընդ որում, վերադարձվում են մուտքի երկրում ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկար տարիների բնակությունից հետո (մինչև 15 և նույնիսկ ավելի տարիներ):

Նշված խմբում հատկապես շատ են Ռուսաստանի Դաշնությունից դատական կարգով արտաքսված կամ վտարված ՀՀ քաղաքացիները: Դեռևս 2013թ. հուլիսից Ռուսաստանում ընդլայնվեց այն օտարերկրացիների շրջանակը, ում նկատմամբ սկսեց կիրառվել մուտքի արգելք: Բացառություն չէին նաև ՀՀ քաղաքացիները: «ՌԴ-ից ելքի և ՌԴ մուտքի կարգի մասին» ՌԴ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն երեք տարվա ընթացքում երկու վարչական իրավախախտում թույլ տված օտարերկրյա քաղաքացիների մուտքը ՌԴ կարող է փակվել 5 տարով: Իսկ «Վարչական իրավախախտումների մասին ՌԴ օրենսգրքի» 18.8 հոդվածի համաձայն այդ անձինք տուգանվում են և ենթարկվում վարչական վտարման: 2019թ. տվյալներով 1612 ՀՀ քաղաքացու մուտքը ՌԴ արգելվել է, ՌԴ տարածքից վտարելու մասին դատարանի որոշման առկայության պատճառով, ինչը ենթակա է բողոքարկման միայն դատական կարգով:

Վերաինտեգրման գործընթացը ձևավորող գործոնները:

Վերաինտեգրումը կարելի է սահմանել որպես միգրանտի՝ իր ծագման երկրում կրկին ներառվելու գործընթաց[2]: Վերաինտեգրման գործընթացը ներառում է տնտեսական, սոցիալ-հոգեբանական և մշակութային կողմեր, որոնք սերտ փոխկապակցված են և փոխազդում են միմյանց վրա:

Իրենց ծագման երկրում վերադարձող միգրանտների վերաինտեգրումը բարդ գործընթաց է, որը քիչ թե շատ հաջող է ընթանում՝ կախված նրանից,

---

[1] Տվյալները տրամադրվել են ԵՄ Սահմանային և առափնյա պահպանության եվրոպական գործակալության կողմից:

[2] **Չոբանյան Հ.** «Դիտարկումներ Հայաստան վերադարձող միգրանտների վերաինտեգրման հիմնախնդիրների շուրջ», Երևան, 2012, էջ 20:

թե արդյոք հաջո՞ղ է եղել նրանց **միգրացիոն փորձն** արտերկրում, ի՞նչ աստիճանի են նրանք ինտեգրվել ընդունող հասարակությունում: Եթե արտերկրում ձեռք բերված հաջող տնտեսական և սոցիալական փորձը կարող է կարևոր խթան լինել հայրենիքում արագ և արդյունավետ վերաինտեգրման համար, ապա անհաջողությունները, որոնք եղել են արտագաղթի ժամանակ և դրդել միգրանտին վերադառնալ հայրենիք, նրա համար կարող են խոչընդոտ դառնալ վերաինտեգրման համար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ միգրանտների՝ իրենց ծագման երկրում վերաինտեգրումը ձևավորվում է երեք հիմնական փոխկապակցված բաղադրիչներից՝ մեկնման վայրը, այնտեղ մնալու տևողությունը և մինչև մեկնումն ու վերադարձից հետո պայմանները[1]:

Հաջող վերաինտեգրման համար առաջնահերթ նշանակություն ունի նաև վերադարձի **կամավոր** որոշման ընդունումը: Այն միգրանտները, ովքեր կամավոր են վերադառնում իրենց ծագման երկիր, և՛ հոգեբանորեն, և՛ նյութապես առավել պատրաստ են լինում վերաինտեգրմանը: Իսկ հակառակ դեպքում՝ հաճախ միգրանտները ուղիներ են գտնում կրկին հեռանալու իրենց երկրից:

Վերաինտեգրման համար կարևոր գործոն է վերադարձի որոշման իրականացման **պատրաստակամությունը**[2], ինչի արդյունքում էլ միգրանտները մոբիլիզացնում են համապատասխան նյութական (ֆինանսական կապիտալ) և ոչ նյութական ռեսուրսները (կապեր, հարաբերություններ, հմտություններ), ինչը ապահովում է նրանց հաջող վերադարձը: Ժամանակը, ռեսուրսները, փորձը, գիտելիքները և ընդունող ու ծագման երկրների վերաբերյալ տեղեկացվածությունը այն հիմնական գործոններն են, որ ձևավորում են միգրանտների՝ վերադարձի համար պատրաստակամության կարողությունները: **Պատրաստվածությունը**[3] ոչ միայն միգրանտների՝ իրենց «տուն» վերադարձի կամավոր ընտրության որոշման ընդունումն է, այլև այն իրականացնելու նրանց պատրաստ լինելը: Այստեղից էլ առաջանում է այն հարցը՝ ինչո՞ւ որոշ միգրանտներ վերադարձից հետո նպաստում են իրենց երկրի զարգացմանը, իսկ մյուսները՝ ոչ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերադարձողների՝ իրենց ծագման երկրում վերաինտեգրումը ձևավորում են երկու հիմնական գործոններ՝ վերադարձի պատրաստվածությունը և վերադարձի անհատական որոշումը (տե՛ս գծապատկեր 3):

---

[1] Conditions of Modern Return Migrants – Editorial Introduction / Jean-Pierre CASSARINO European University Institute, page 100.

[2] Տես նույն տեղում, էջ՝ 102:

[3] Տես նույն տեղում, էջ՝ 102:



Գծապատկեր 3. Վերադարձած միգրանտի պատրաստվածության խնդիրը

Հայաստան վերադարձողների կարիքները և դրանց լուծման ուղղիները:

Վերադարձից հետո միգրանտները բախվում են մի շարք խնդիրների, հատկապես, եթե Հայաստանից հեռանալուց «այրել են» բոլոր կամուրջները՝ վաճառել բնակարանը, թողել աշխատանքը, հարազատներին և այլն: Վերադարձողների և հատկապես նրանց համար, ովքեր Հայաստանից բացակայել են տևական ժամանակ, հատկապես խնդրահարույց է վերադարձից հետո ամեն ինչ վերագտնելը, կրկին հարմարվելը: Քանի որ իրենց բացակայության ընթացքում որոշակի փոփոխություններ են եղել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ փոխվել է իրավական դաշտը, ձևավորվել են նոր ինստիտուտներ և այլն: Ուստի Հայաստանում առկա իրավիճակի, օրենսդրական դաշտի, զբաղվածության և սեփական բիզնեսի/աշխատանքի կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ իրազեկման կարիք ունեն: Այդ բացը շատ հաճախ լրացնում են սոցիալական ցանցերը, բարեկամները և ընկերները, ծանոթները, ովքեր աջակցում են միգրանտներին՝ Հայաստանի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելով ինչպես նախքան նրանց վերադարձը, այնպես էլ վերադարձից հետո՝ Հայաստանում վերաինտեգրման գործընթացում: Մասնավորապես, սոցիալական կապիտալ հանդիսացող կապերը ընկերների, հարևանների հետ վերադարձած միգրանտների համար հանդես են գալիս որպես տեղեկատվական, հոգեբանական, երբեմն նաև ֆինանսական աջակցության կարևոր աղբյուր: Սակայն, երկար տարիներ բացակայելով՝ նրանք հաճախ կորցնում են իրենց սոցիալական կապերը և նրանց համար լուրջ խնդիր է դառնում դրանց վերաակտիվացումը: Այն միգրանտները, ովքեր, օրինակ, ապաստան հայցողների կարգավիճակում են եղել, ապաստանի երկրում աշխատելու իրավունք չեն ունեցել, ժամանակի ընթացքում կորցրել են նաև իրենց մասնագիտական որակավորումը:

Որոշ ընտանիքներ նախքան մեկնելը վաճառել են իրենց բնակարանները՝ ճանապարհածախսը և այլ կարիքներ հոգալու նպատակով, ուստի վերադառնալով նրանք առաջնահերթ ունենում են կացարանի խնդիր: Սա մեծագույն խնդիր է հատկապես հարկադիր վերադարձածների շրջանում: Արտերկրում բուժում ստացած, սակայն Հայաստան վերադարձած քաղաքացիների բժշկական աջակցության հարցը նույնպես շատ հրատապ է, քանի որ վերադարձողների այս խումբը վերադարձից հետո պետք է հայրենիքում շարունակի բուժման կուրսերը, մշտապես ստանա դեղորայք՝ երբեմն բավականին թանկարժեք, ինչը շատ հաճախ հնարավոր չի լինում ֆինանսական խնդիրների պատճառով, իսկ վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում դեղորայքը չի կարող անդադար տրամադրվել շահառուին:

Չնայած Հայաստան վերադարձողների հոսքերը տարեցտարի ավելանում են, այնուհանդերձ, պետք է նշել, որ այսօր Հայաստանում վերադարձող միգրանտների վերաինտեգրմանն ուղղված պետական նպատակային ծրագրեր չեն իրականացվում, չկան իրավասու պետական մարմինների համար սահմանված հստակ գործառույթներ:

Այս ամենով հանդերձ, ակնհայտ է, որ Հայաստանում վերաինտեգրվելու նպատակով վերադարձողներին անհրաժեշտ է տրամադրել տևական աջակցություն, հակառակ դեպքում, վերադարձածների լիարժեք վերաինտեգրման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը կարող է որպես արտամղող գործոն հանդիսանալ երկրից նրանց կրկին արտագաղթելու որոշման հարցում:

Հայաստանում վերադարձի և վերաինտեգրման աջակցության ծրագրերը (Assisted Voluntary Return and Reintagration) մեծամասամբ իրականացվում են միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից[1]՝ գլխավորապես ԵՄ ֆոնդերի կամ ուղարկող երկրների ֆինանսավորմամբ: Որոշ ծրագրերի իրականացման գործում իրենց մասնակցությունն ունեցել են նաև պետական կառույցները՝ մասնավորապես՝ Միգրացիոն ծառայությունը[2]:

Չնայած մի շարք վերաինտեգրման ծրագրերի առկայությանը Հայաստանում, այնուամենայնիվ, վերադարձ(վ)ողների համար նախատեսված պետական օժանդակության որևէ ծրագիր այսօր դեռևս չի

---

[1] Միգրացիայի միջազգային կազմակերպություն, «Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի» հայաստանյան գրասենյակ, Կայուն զարգացման հայկական հիմնադրամ, Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակ, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, «Գործարար Նախաձեռնությունների Հզորացում և Զարգացում» ՀԿ, «Քվոլիֆայդ Սմարտ Էսիստանց» ՀԿ:

[2] Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների հետ իրականացված վերաինտեգրման աջակցության ծրագրերի իրականացումը, Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի (ERRIN) ստեղծումը, Վերադարձի և վերաինտեգրման եռամսյակային ֆորումների կազմակերպումը, և այլն:

իրականացվում: Մեծ հաշվով Հայաստանում ցուցաբերվող վերաինտեգրման աջակցությունը ԵՄ երկրներից կամավոր վերադարձի խրախուսման ծրագրերի մաս է և ձևակերպված չէ որպես հայաստանյան օրակարգից բխող հիմնահարց:

Մի կողմից, վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված աջակցության ծրագրերը շարունակական բնույթ չեն կրում: Մյուս կողմից էլ, ծրագրերը ունենում են տարաբնույթ սահմանափակումներ, օրինակ՝ շահառուներ կարող են դառնալ հիմնականում կամավոր վերադարձող միգրանտները, իսկ հարկադիր վերադարձողները (արտաքսվածները) շատ հաճախ դուրս են մնում տրամադրվող աջակցության ծրագրերից: Այսպես, ներկայումս գործում են վերաինտեգրման 9 ծրագրեր, որոնցից 7-ի շահառուները կարող են դառնալ միայն կամավոր վերադարձող ՀՀ քաղաքացիները, իսկ 2-ինը՝ նաև հարկադիր վերադարձողները: Տարբեր են նաև իրականացվող ծրագրերի միջոցով տրամադրվող աջակցող ծառայությունների փաթեթները: ԵՄ անդամ երկրների կողմից կամավոր վերադարձի ծրագրերի իրականացման միջոցով խրախուսվում է միգրանտների առավել արժանապատիվ վերադարձը:

Հայաստանում գործող վերաինտեգրման աջակցության ծրագրերը, որոշ տարբերություններով հանդերձ, առաջարկում են աջակցության այսպես կոչված «լայն» փաթեթ, որը, բացի խորհրդատվական աջակցությունից և ուղղորդման ծառայությունից, ընդգրկում է ֆինանսական ծախսերի որոշակի ուղղություններ, ինչպիսիք են՝ եկամուտ ապահովող գործունեությամբ զբաղվելը (օժանդակություն փոքր բիզնեսի հիմնմանը կամ կայացած բիզնեսի հզորացում), մասնագիտական վերապատրաստումը, երեխաների ուսուցումը, սոցիալական և բժշկական կարիքներին ուղղված աջակցությունը և այլն:

Հարկ է նշել, որ տարիներ շարունակ ԵՄ կողմից ֆինանսավորվող տարբեր վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում ծառայությունում գործել են ՀՀ վերադարձող քաղաքացիների համար նախատեսված «մեկ պատուհանի» սկզբունքով գործող խորհրդատվական և ուղղորդման ծառայություններ՝ նպատակ ունենալով աջակցություն ցուցաբերել արտերկրից վերադարձած ՀՀ քաղաքացիներին Հայաստանում հաստատվելու հարցում: Սակայն սա վերադարձողներին առաջարկվող այսպես կոչված «նեղ» փաթեթն է, որը վերադարձող միգրանտներին առաջարկում է միայն խորհրդատվական բնույթի աջակցության տրամադրում և ուղղորդում դեպի այլ ծառայություններ: Այնուամենայնիվ, ուղղորդման ծառայությունն էլ շարունակական բնույթ չի կրում և կախված է ծրագրերի տևողությունից:

Շատ կարևոր է հարկադիր վերադարձող ՀՀ քաղաքացիներին դիտարկել որպես հատուկ ուշադրության կարիք ունեցող թիրախային խումբ, ում պետք է տրամադրել վերաինտեգրման աջակցություն և հատկապես վերաինտեգրման նախնական փուլում, որպեսզի կանխվի նաև նրանց հետագա ռեէմիգրացիան՝ կրկնակի արտագաղթը Հայաստանից: Ուստիև, անհրաժեշտ է վերադարձողների պետական աջակցության շուտափույթ ծրագրի ընդունումը և իրականացումը, որը կբխի հայաստանյան օրակարգից՝ դրանում արտացոլելով Հայաստանի միգրացիոն քաղաքականության առաջնահերթությունները, ճգնաժամային իրավիճակում գտնվող վերադարձողների, մասնավորապես՝ հարկադիր վերադարձողների առաջնային կարիքները: Անհրաժեշտ է աջակցության տրամադրման ինստիտուցիոնալ լուծումներ տալ, քանի որ մինչ այժմ այդ գործընթացն իրականացվել է անհատական դեպքերին աջակցություն տրամադրելու միջոցով:

Պետության պատրաստակամությունը՝ օգնելու վերադարձողներին վերահաստատվելու և նոր կյանք սկսելու հայրենիքում, կարևոր խթան կհանդիսանա վերադարձի հոսքերի ավելացման, վերաինտեգրման գործընթացի արդյունավետ կազմակերպման և Հայաստան ներգաղթի քաղաքականության խրախուսման համար: Պետության կողմից դրամական միջոցների ներդրումը արձանագրում է նաև պետության շահագրգռվածությունը վերադարձած միգրանտների՝ հայրենիք վերադարձի խրախուսման և վերաինտեգրման հարցում, ինչը նաև կարևոր ազդակ կարող է լինել ՀՀ – ԵՄ վիզաների ազատականացման գործընթացը արագացնելու հարցում:

ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐ

Հայկանուշ Պավելի Չոբանյան
ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն
Վերադարձի և վերաինտեգրման բաժնի պետ, ԵՊՀ հայցորդ

Համառոտագիր

Այսօր, ավելի քան երբևէ, առկա է դեպի Հայաստան վերադարձի կայուն հոսք, և Հայաստանից արտագաղթած ՀՀ քաղաքացիների վերադարձի հիմնախնդիրները մնում են խիստ արդիական Հայաստանի հասարակության և պետության համար:

Վերադարձի հոսքերի ինտենսիվությունը առավել ակտիվացավ հատկապես վերջին տարիներին Եվրամիության երկրներում խստացված միգրացիոն քաղաքականությամբ՝ պայմանավորված նաև 2015թ. Եվրոպայի միգրացիոն ճգնաժամով:

Վերադարձ(վ)ողների և հատկապես նրանց համար, ովքեր Հայաստանից բացակայել են տևական ժամանակ, խնդրահարույց է վերադարձից հետո ամեն ինչ վերագտնելն ու կրկին հարմարվելը հայրենիքում:

Ուստիև, անհրաժեշտ է վերադարձողների պետական աջակցության ծրագրի շուտափույթ իրականացումը, որը կօգնի վերադարձողներին վերահաստատվելու և նոր կյանք սկսելու հայրենիքում, կարևոր խթան կհանդիսանա վերադարձի հոսքերի ավելացման, վերաինտեգրման գործընթացի արդյունավետ կազմակերպման և Հայաստան ներգաղթի քաղաքականության խրախուսման համար:

Բանալի բառեր՝ միգրացիա, միգրանտ, հետընդունում, ռեադմիսիա, վերադարձ, հարկադիր վերադարձ, վերաինտեգրում, ապաստան հայցող, վիզաների ազատականացում:

ВОЗВРАЩЕНИЯ И РЕИНТЕГРАЦИЯ. ВЫЗОВЫ И РЕШЕНИЯ

Айкануш Павловна Чобанян
Начальник Отдела Возвращения и Реинтеграции
Миграционной Службы РА, соискатель ЕГУ

Аннотация

Сегодня, более чем когда-либо, наблюдается постоянный поток возвращений в Армению, и проблемы возвращения армянских граждан, эмигрировавших из Армении, остаются весьма актуальными для общества и государства Армении.

Интенсивность потоков возвращения усилилась, особенно в последние годы, в результате ужесточения миграционной политики в старанах Европейского Союза, в частности в связи с миграционным кризисом 2015 года в Европе. Для возвращенцев и особенно для тех, кто долгое время отсутствовал из Армении, проблематично снова адаптироваться после возвращения на родину.

Таким образом, нужна немедленная реализация государственной программы для помощи возвращающимся, которая поможет им реинтегрироватся и начать новую жизнь на родине, одновременно станет важным стимулом для увеличения новых потоков репатриантов, эффективной организации процесса реинтеграции и поощрения иммиграционной политики в Армении.

Ключевые слова: миграция, мигрант, возвращение, реадмиссия, принудительное возвращение, реинтеграция, беженец, либерализация виз.

RETURN AND REINTEGRATION. CHALLENGES AND SOLUTIONS

Haykanush Pavel Chobanyan
Head of Return and Reintaration Division of the RA
Migration Service, YSU Applicant

Abstract

Today, more than ever, there is a steady flow of returns to Armenia, and the problems of returning Armenian citizens who have emigrated from Armenia remain highly relevant to the Armenia's society and state. The intensity of the return flows has been strengthened, especially in recent years, as a result of tightened migration policies in the Member States of the European Union, combined with the 2015 European migration crisis. It is problematic to regain everything and adapt in the homeland after return both for the voluntary and forced returnees and especially for those who have been absent from Armenia for a long time. Therefore, the immediate implementation of the assistance program for returnees by the Government is very much nedded, which will help returnees to reintagrate and start a new life in the homeland, will be an important impetus for increasing return flows, effectively organizing the reintegration process, and encouraging immigration policy in Armenia.

Keywords: migration, migrant, readmission, return, forced return, reintegration, asylum seeker, visa liberalization.